ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«10» մայիսի 2023թ. N ՄՈ 167-Ա

ք. Արմավիր

«ՈՍԿԵՀԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ ՇՄԱՎՈՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 156-րդ, 160-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և «Ոսկեհատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սյուզաննա Շմավոնյանի 2023 թվականի մարտի 15-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Ոսկեհատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սյուզաննա Շմավոնյանին տրամադրել 2022-2023 թվականների աշխատանքային տարվա չօգտագործված և 2023-2024 թվականների աշխատանքային տարվա հերթական երկարացված արձակուրդները՝ 2023 թվականի մայիսի 15-ից հուլիսի 24-ը ներառյալ՝ 50 աշխատանքային և 2 տոնական օր տևողությամբ:
2. Սյուզաննա Շմավոնյանի արձակուրդի մեջ գտնվելու ժամանակահատվածում «Ոսկեհատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Ոսկեհատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Սոֆիկ Պետրոսյանին:
3. 2023 թվականի մայիսի 15-ից հուլիսի 24-ը ներառյալ «Ոսկեհատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Սոֆիկ Պետրոսյանի աշխատավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Սյուզաննա Շմավոնյանին աշխատանքի մեջ համարել 2023 թվականի հուլիսի 25-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,
ՄԱՐԶՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ՝ **Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ**